ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 29-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 25-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների և ղեկավարվելով ՀՀ ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 4-Լ հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ և 7-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2020 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկային ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 25-Լ հրամանով հաստատված հավելվածի՝

1) 14-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 25.1 ենթակետով.

«25.1) ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում և օտարման շերտերում շինարարական աշխատանքների հայտնաբերման դեպքում նշված տեղեկատվության տրամադրումը Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին՝ համապատասխան վերահսկողական գործառույթներ իրականացնելու նպատակով,»,

2) 14.1-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 4-րդ ենթակետից հանել «հանգստի սեզոնին» բառերը,

բ) 6-րդ ենթակետում «փրկելը» բառը փոխարինել «փրկելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը» բառերով, իսկ «բուժօգնության» բառը՝ «օգնության» բառով,

գ) 7-րդ ենթակետում «օգնության հասնելը և ափ տեղափոխելը» բառերը փոխարինել «օգնության հասնելու և ափ տեղափոխելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը» բառերով:

2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության իրավասու ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

«04»__10.__ 2023թ.

ք. Երևան